

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ

02.09. 2015 թ. ժամը 11.00

Նախագահում էր մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 85-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ավետիք Դարբինյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին՝ 2015 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ:
/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանիտարահիգիենիկ վիճակի մասին:
/Զեկ. Սաշա Բավեյան - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ/
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2015 թվականի բերքահավաքի արդյունքների և աշնան գյուղատնտեսական աշխատանքների մասին:
/Զեկ. Վանիկ Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/
4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի սանիտարահիգիենիկ վիճակի մասին:
/Զեկ. Անուշ Պողոսյան - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2015 թվականի ամառային զորակոչի արդյունքների մասին:

/Զեկ. Կարեն Հակոբյան - մարզպետի տեղակալ/

6. Այլ հարցեր:

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել՝

ա. համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ՝ համապատասխան ցուցանիշներն ապահովելու համար.

բ. աշխատավարձերի գծով նախորդ տարիների կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից 2015 թվականի հաստատված պլան-ժամանակացույցին համապատասխան.

2) ՀՀ կառավարության կողմից հատկացված՝ սուբսիդավորված, աշնանացան ցորենի սերմացուի, դիզելային վառելանյութի, ազոտական, ինչպես նաև ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի բաշխումն ու հատկացումն իրականացնել ըստ համայնքների շահառուների ներկայացրած պահանջարկների.

3) նախադպրոցական ուսումնական հաստատություններում աղիքային ինֆեկցիաների և սննդային թունավորումների դեպքերը կանխարգելելու նպատակով ամենօրյա խիստ հսկողություն իրականացնել այդ հաստատությունների սանիտարահիգիենիկ վիճակի վրա և ամենամյա տեղեկատվություն ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշման, ՀՀ առողջապահության նախարարի 2002 դեկտեմբերի 20-ի «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) N 2.III.1 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 857 և 2013 թվականի օգոստոսի 12-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.3.1-0102013 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 42-Ն հրամանների պահանջներից բխող ամենօրյա միջոցառումների իրականացման մասին:

2. **Մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին՝** «ՀԶԿ» ՓԲԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրել խորհրդակցություն՝ մարզի սանիտարահիգիենիկ վիճակի մասին հարցը քննարկելու համար:

3. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը /պետ Վանիկ Հովհաննիսյան/՝

1) հետևողական աշխատանքներ տանել ՀՀ կառավարության կողմից հատկացված 325 տոննա աշնանացան ցորենի բարձր վերարտադրության սերմերի բաշխումն ըստ համայնքների

կողմից ներկայացված հայտերի իրականացնելու և մարզում աշնանացանի ցանքը կատարելու համար.

2) աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների և մարզի գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հետ՝ աշնանացանի ցանքատարածություններն առավելագույնին հասցնելու և նախորդ տարվա ցուցանիշները գերազանցելու համար.

3) ելնելով այս տարվա երաշտից՝ աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների հետ մարզում անհրաժեշտ ծավալային անասնակեր կուտակելու և ձմեռվա ընթացքում անասնազխաքանակը պահպանելու համար:

ՄԱՐԶՊԵՏ՝



ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ